

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/6

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Կարինե Զաքարյանի 09.12.2013 թ-ի դիմումով բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

Ա/Ձ Կարինե Զաքարյանի բողոքում բերված փաստարկները.

Ա/Ձ Կարինե Զաքարյանը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ-ից ստացել է ծանուցում հարկային պարտավորություններ ունենալու և այդ պարտավորությունները կատարելու պահանջով: Ներկայանալով հարկային տեսչություն 22.11.2013 թ-ին ստացել է փոխադարձ հաշվարկների տեղեկանք, ըստ որի իր նկատմամբ հաշվարկված պարտավորությունները կազմում են ընդամենը 1.105.220 դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով 6000 դրամ տույժի գումար, հաստատագրված վճարի գծով 169.486 դրամ ապառք, 132.843 տույժ և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով 515.000 դրամ ապառք և 281,891 դրամ այդ գումարը չվճարելու հետևանքով հաշվարկված տույժի գումար:

Ըստ բողոքի, վերը նշված պարտավորությունների գումարներն հաշվարկվել են գործող օրենսդրության խախտմամբ, անհիմն են և ենթակա են վերահաշվարկման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն 2005 թ-ի նոյեմբերի 11-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի. «Մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թ-ի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):», իսկ համաձայն 21.08.2008 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի. «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման»: Ավելին՝ համաձայն 19.12.2012 թ-ի «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների՝ Անհատ ձեռնարկատերերն ազատվում են մինչև 2005 թ-ի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) և 2006 թ-ի հունվարի 1-ից մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների հաշվարկված և չվճարված պարտավորությունների (այդ թվում՝ նվազագույն գումարների նկատմամբ

հաշվարկված և չվճարված տույժերի) վճարումից, իսկ համաձայն <2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին> ՀՀ Օրենքի 1-ին հոդվածի՝ սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ, իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի՝ Օրենքի 1-ին հոդվածում նշված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը հարկային մարմինը մինչև 2011 թ-ի հուլիսի 15-ը ՀՀ կառավարության սահմանած կարգով ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր): Հարկային մարմինը սույն մասով սահմանված ժամկետում պետական ռեգիստր է ներկայացնում նաև հարկային մարմնում հաշվառված այն կազմակերպությունների ցանկը, որոնց հիմնադիր կազմակերպությունները լուծարված են: Ըստ բողոքի, Ա/Ձ Կարինե Ջաքարյանը որպես անհատ ձեռնարկատեր լուծարվել է 27.07.2011 թ-ին:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Կարինե Ջաքարյանը խնդրում է դիմումն ընդունել վարույթ և Շենգավիթի ՀՏ-ում վարվող անձնական հաշվի քարտում կատարել վերահաշվարկ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգադարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ա/Ձ Կարինե Ջաքարյանի բողոքում նշված պնդումը, որ տվյալ դեպքում կիրառելի են <Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների արտոնություններ սահմանելու մասին> ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքի 2-րդ հոդվածի դրույթները, հիմնավոր չէ, քանի որ Ա/Ձ Կարինե Ջաքարյանը չի բավարարել նույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված պահանջներին: Մասնավորապես, <Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների արտոնություններ սահմանելու մասին> ՀՕ-215-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն. <Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա>:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինե Ջաքարյանը 19.10.1998 թ-ին հարկային տեսչություն է ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն, որի արդյունքում հաստատագրված վճարների գծով առաջացել են լրացուցիչ պարտավորություններ, որոնք, սակայն, Ա/Ձ Կարինե Ջաքարյանի կողմից չեն կատարվել: Այսինքն, եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներից բացի Ա/Ձ Կարինե Ջաքարյանը չկատարված պարտավորություններ է ունեցել նաև հաստատագրված վճարների գծով:

Բացի այդ, նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, համապատասխան արտոնությունները տարածվում են մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած անձանց վրա, սակայն Ա/Ձ Կարինե Զաքարյանի կողմից ընդամենը ներկայացվել է գործունեությունը ժամանակավրապես դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն:

2. Ա/Ձ Կարինե Զաքարյանի բողոքում նշված հաջորդ պնդումը, որ կիրառելի են «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ ՀՕ-151-Ն օրենքի 1-ին հոդվածով սահմանված դրույթները, նույնպես հիմնավոր չէ: Մասնավորապես, նշված ՀՕ-151-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի եւ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինե Զաքարյանը (ինչպես վերևում նշվել է) ՀՀ 2005 թ-ի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք չի ունեցել, հետևապես նրա նկատմամբ կիրառելի չեն նաև վերոգրյալ ՀՕ-151-Ն օրենքի 1-ին հոդվածի դրույթները:

3. Հարկ է նշել նաև, որ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ ՀՕ-185-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների (այդ թվում՝ համայնքների) և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով ունեն հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքներ և դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ (այսուհետ՝ հարկային պարտավորություն)»:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Այն հարկ վճարողները, որոնք 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով ունեն շահութահարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, պարզեցված հարկի, հաստատագրված վճարի, տարեկան պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով հարկային պարտավորություններ, կարող են մինչև 2011 թվականի օգոստոսի 20-ը դիմել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ սույն օրենքին համապատասխան հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց հաստատելու համար»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինե Զաքարյանը մինչև 2011 թվականի օգոստոսի 20-ը չի դիմել իր հաշվառման վայրի հարկային մարմին հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց հաստատելու համար:

4. Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդմանը, որ կիրառելի են «2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ ՀՕ-186-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները, ապա այն ևս հիմնավոր չէ: Մասնավորապես, նշված ՀՕ-186-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա

փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ>:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարինե Զաքարյանը հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:

Հանձնաժողովի 20.12.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն Ա/Ձ Կարինե Զաքարյանի բողոքը մերժվել է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Կարինե Զաքարյանի 09.12.2013 թ-ի դիմումով բերված բողոքը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ